



# Պաշտպանության նախարարության գնումների ուսումնասիրություն

ԵՐԵՎԱՆ 2018

Սույն զեկույցի պատրաստումը և տպագրությունը հնարավոր է դարձել *Բաց հասարակության հիմնադրամներ*-Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ (դրամաշնորհ N19757): Չեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել *Բաց հասարակության հիմնադրամներ*-Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

# Բովանդակություն

Մեթոդաբանություն .....	1
Բյուջետային ծախսեր, 2015-2018 թթ. ....	1
Աղյուսակ 1. Բյուջետային ծախսերի դինամիկա .....	2
Աղյուսակ 2. ՊՆ բյուջետային ծախսերի շարժընթացը, մլրդ դրամ .....	2
Պլանավորված գնումների կառուցվածքի ուսումնասիրություն, 2017-2018 թթ. ....	3
Գրաֆիկ 1. ՊՆ պլանային գնումների դինամիկան 2013-2018թթ. ....	3
ՊՆ գնումների ուսումնասիրությունը ըստ եռամսյակների և ընթացակարգերի.....	5
Գրաֆիկ 2. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ ամիսների.....	5
Աղյուսակ 4. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների (2017թ.).....	6
Աղյուսակ 5. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների (2018թ. I կիսամյակ) .....	7
Աղյուսակ 6-ում և 7-ում փորձ ենք կատարել իրականացնել գնումների վերլուծություն ըստ ընթացակարգերի և դրանց կիրառման արդյունքում գեներացված պարտավորությունների:...	7
Աղյուսակ 6. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ ընթացակարգերի (2017թ.) .....	7
Աղյուսակ 7. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ ընթացակարգերի (2018թ. I կիսամյակ) .....	8
2017թ ՊՆ կողմից կատարված գնումների մոնիտորինգի արդյունքները .....	8
Աղյուսակ 8. ՊՆ գնումների հաղթած 10 խոշոր մատակարարներ, 2017 .....	9
Աղյուսակ 9. ՊՆ գնումներում հաճախակի հաղթած մասնակիցները, 2017.....	10
Աղյուսակ 10. Խոշորագույն մատակարարների պորտֆելում ՊՆ-ի դերակատարումը, 2017 .....	11
2018թ I կիսամյակում ՊՆ կողմից կատարված գնումների մոնիտորինգի արդյունքները.....	11
Աղյուսակ 11. ՊՆ գնումների հաղթած խոշոր մատակարարներ, 2018.....	12
Աղյուսակ 12. ՊՆ գնումների հաճախակի հաղթած մասնակիցները, 2018 .....	13
Աղյուսակ 13. Խոշորագույն մատակարարների պորտֆելում ՊՆ-ի դերակատարումը, 2018 .....	14
Աղյուսակ 14. Խոշոր հաղթողների ՉԱՀ-ին կատարված վճարումները .....	15
Կոռուպցիոն ռիսկեր պարունակող այլ գնումներ .....	16
Աղյուսակ 15. ՉԱՀ-ի տվյալների ուսումնասիրության արդյունքում ռիսկայնություն ներկայացնող ֆիրմաների ցանկ.....	16
Բողոքարկման համակարգի կողմից կայացած որոշումների մոնիտորինգ .....	23
Առաջարկություններ և եզրակացություններ .....	24



# Մեթոդաբանություն

Մույն գեկույցում ամփոփված է 2017-2018 թթ. Պաշտպանության նախարարության (ՊՆ) գնման պայմանագրերի հակիրճ ուսումնասիրությունը: Ուսումնասիրության առարկա են հանդիսանում ՊՆ փաստացի գնումների գլխավոր ուղղությունները, փաստացի և պլանավորված գնումների համեմատական արդյունքները, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկեր պարունակող գնումները և ոլորտի համատեքստում գնումների բողոքարկման համակարգը: Բոլոր թվային ցուցանիշները վերցված ու հաշվարկված են բաց աղբյուրների հիման վրա: Նման մոնիտորինգի նպատակն է գնման պայմանագրերի բազայից գտել ու նույնականացնել խնդրահարույց պայմանագրերը:

Ձեկույցի պատրաստման համար մոնիտորինգի ժամանակահատված է ընտրվել 2017թ հունվարի 1-ից 2018թ հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածը: Բողոքարկման համակարգի մոնիտորինգը ծածկել է 2018թ I կիսամյակի միտումների ուսումնասիրությունը:

## Բյուջետային ծախսեր, 2015-2018 թթ.

Գնումների ինտենսիվության տեսակետից, ուժային կառույցներից ամենաակնառուն Պաշտպանության նախարարությունն է՝ թե՛ ըստ պայմանագրերի թվաքանակի և թե՛ գնումների արժեքային հանրագումարի: 2017-2018 թվականներին գնումների հաշվետվողականության կայքում առկա են ավելի քան 22 հազար պետական գնումների պայմանագրեր՝ 317 միլիարդ ընդհանուր արժողությամբ, **որից 19% միայն ՊՆ-ի կողմից**: Աղյուսակ 1-ից նկատելի է, որ 2015 թվականից ի վեր պետական բյուջեի ծախսերը շարունակաբար աճել են, ընդ որում ՊՆ ծախսերը նույնպես ունեն աճի դինամիկա, և նրանց մասնաբաժինը պետական բյուջեի ծախսերում կազմում է 14.1-19.6%:

Աղյուսակ 1. Բյուջետային ծախսերի դինամիկա

	2015	2016	2017	2018 ( I կիսամյակ)
<b>Ընդամենը պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ, որից՝</b>	1409	1449	1505	1487
<b>Ընդամենը ՊՆ ծախսեր, մլրդ դրամ</b>	199	226	294	248.6
<b>ՊՆ ծախսերի մասնաբաժինը, %</b>	14.1	15.6	19.6	16.7

ՊՆ առավել խոշոր ծախս հանդիսացող ուղղությունը ռազմական պաշտպանության բնագավառին ուղղված ծախսերն են, որոնք նույնպես տարեց տարի գրանցում են աճի միտում:


Աղյուսակ 2. ՊՆ բյուջետային ծախսերի շարժընթացը, մլրդ դրամ

	2015	2016	2017	2018 ( I եռամսյակի կանխատեսմամբ)
Ռազմական պաշտպանություն	191.1	218	286.4	238.2
Արտաքին ռազմական օգնություն	0.1	0.1	0.1	0.1
Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում	1.6	1.6	1.6	2.4
Պաշտպանություն (այլ դասերի չպատկանող)	5.6	6.0	6.2	7.8
<b>Ընդամենը</b>	<b>199</b>	<b>226</b>	<b>294.4</b>	<b>248.6</b>

## Պլանավորված գնումների կառուցվածքի ուսումնասիրություն, 2017-2018 թթ.

Գրաֆիկ 1-ում ներկայացված են բյուջեի Հավելված 12-ով հաստատված գնումների պլանները:

Գրաֆիկ 1. ՊՆ պլանային գնումների դինամիկան 2013-2018թթ.



2018 թվականին ՊՆ-ը պլանավորել է գնումներ 43 միլիարդ ՀՀ դրամ արժողությամբ, այսինքն՝ նախորդ տարվա պլանի համեմատ **1,6 միլիարդ դրամով ավելի**, ինչն ի թիվս այլոց պայմանավորված է անվանացանկի ընդլայնմամբ: Գնումների պլանի հիմքերը ներկայացված են հավելված 1-ում:

Մասնավորապես գնումների պլանում մեծ կշիռ ունեն *վառելիքը, սնունդը* (այդ թվում՝ տարատեսակ մսատեսակներ, սերուցքային կարագ, 1-ին կարգի ցորենի ալյուր, հալած պանիր): Վառելիքի տեսակարար կշիռը կազմում է շուրջ 30-31%, իսկ սննդինը՝ 24-25%: Բացի այդ, ՊՆ-ը

պլանավորում է ձեռք բերել մեծաքանակ հանդերձանքի պարագաներ, անիվներ և այլն:  
(Աղյուսակ 3)


Պլանավորված գնման ուղղություն	2017թ.		2018թ.	
	Պլանավորված գնումների ընդհանուր ծավալ, մլրդ դրամ	Մասնաբաժինը ՊՆ պլանային բյուջետային ծախսերում, %	Պլանավորված գնումների ընդհանուր ծավալ, մլրդ դրամ	Մասնաբաժինը ՊՆ պլանային բյուջետային ծախսերում, %
Վառելիք	12.3	5.9	13.2	5.3
Սնունդ	10.4	5.0	10.2	4.1
Էլեկտրականություն և գազի բաշխում	4	1.9	3.8	1.5
Հանդերձանք	2.4	1.1	2.3	0.9
Անիվներ	0.8	0.4		
Այլ ծախսեր	11.4	5.4	13.4	5.4
<b>Ընդամենը</b>	<b>41.3</b>	<b>19.7</b>	<b>42.9</b>	<b>17.3</b>

2017 թվականին ՊՆ կողմից փաստացի կնքվել է 766 պայմանագիր ըստ որի ձեռք է բերվել 34 միլիարդ դրամ ընդհանուր արժողությամբ սպրանք-ծառայություններ, որը կազմում է *պլանավորված գնումների շուրջ 82%-ը*:

## ՊՆ գնումների ուսումնասիրությունը ըստ եռամսյակների և ընթացակարգերի

Եթե իրականացնենք գնումների բաշխում ըստ ամիսների, կնկատենք խիստ համակենտրոնացվածություն հունվար ամսին: Կնքված պայմանագրերի քանակի տեսանկյունից ինտենսիվ է երկրորդ եռամսյակը:

Գրաֆիկ 2. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ ամիսների





Դիտարկելով 2017 թվականին մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունները, նկատում ենք, որ առաջին եռամսյակում ցուցանիշը եղել է ծայրահեղ բարձր՝ 86 միլիոն դրամ, որը ընդամենը միջին գեներացված պարտավորություններից առավել է 2,1 անգամ: **Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ հիմնականում I եռամսյակում են կնքվում կոմունալ ոլորտի, սննդամթերքի խոշոր պայմանագրերը, որոնք ըստ ժամանակացույցի նախատեսում են դրանց հետագա բաշխում: Ի դեպ, պետք է նշել, որ ներկա մոտեցումները չեն նպաստում գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը, քանի որ իրականության մեջ սա բերում է միջնորդավորված գնումների:**

*Աղյուսակ 4. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների (2017թ.)*

	Գումարը, մլրդ դրամ	Քանակը, հատ	Մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունը, մլն դրամ
I եռամսյակ	16.2	164	86
II եռամսյակ	10	351	28.5
III եռամսյակ	4.2	140	30
IV եռամսյակ	3.2	111	28.8
<b>Ընդամենը</b>	<b>34.1</b>	<b>766</b>	<b>41.8</b>

Աղյուսակ 5. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների (2018թ. I կիսամյակ)

	Գումարը, մլրդ դրամ	Քանակը, հատ	Մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունը, մլն դրամ
I եռամսյակ	11	188	58.5
II եռամսյակ	14.1	351	40.2
<b>Ընդամենը</b>	<b>25.2</b>	<b>539</b>	<b>46.8</b>

Աղյուսակ 6-ում և 7-ում փորձ ենք կատարել իրականացնել գնումների վերլուծություն ըստ ընթացակարգերի և դրանց կիրառման արդյունքում գեներացված պարտավորությունների:

Աղյուսակ 6. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ ընթացակարգերի (2017թ.)

Ընթացակարգ	Քանակ	Մասնաբաժինը, քանակում	Գեներացված գումար, մլն դրամ	Մասնաբաժինը գումարում	Մեկ ընթացակարգի արդյունքում գեներացված միջին գումարը, մլն դրամ
Գնանշման հարցում	128	16.7	1945	6.1	15
Մեկ անձ	30	3.9	564	1.8	19
Մրցույթ	16	2.1	3036	9.5	190
Քանակ. ընթացակարգ առանց հայտար.	27	3.5	2774	8.7	103
Քանակ. ընթացակարգ հայտար.	3	0.4	115	0.4	38
Քաց ընթացակարգ	29	3.8	861	2.7	30
Շրջանակային համաձայնագիր	534	69.6	22710	71	43
<b>Ընդամենը</b>	<b>767</b>	<b>100</b>	<b>32005</b>	<b>100</b>	<b>42</b>

**Աղյուսակ 7. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ ընթացակարգերի (2018թ. I կիսամյակ)**

Ընթացակարգ	Քանակ	Մասնաբա- ժինը	Գեներացված գումար, մլն դրամ	Մասնաբա- ժինը	Մեկ ընթացակարգի արդյունքում գեներացված միջին գումարը, մլն դրամ
Մրցույթ	113	21	17236	68	7
Գնանշման հարցում	395	73	3521	14	112
Մեկ անձ	31	6	4457	18	7
<b>Ընդամենը</b>	<b>539</b>	<b>100</b>	<b>25214</b>	<b>100</b>	<b>21.4</b>

Ինչպես նկատում ենք 2017թ. մրցակցային գնումները կազմել են ավելի քան 60 տոկոս, թե քանակային, թե գումարային առումներով: Ստահոգիչ է, որ 2018թ I կիսամյակի արդյունքներով էականորեն ավելացել են ոչ մրցակցային գնումները:

## **2017թ ՊՆ կողմից կատարված գնումների մոնիտորինգի արդյունքները**

2017թ. ըստ բաց տվյալների (օգտագործվել են ARMEPS համակարգի տվյալները) ՊՆ իրականացրել է 767 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է 34.1 մլրդ դրամի պարտավորություն: Պետք է նշել, որ ՊՆ գնումները կազմում են 2017թ գնումների հաշվետվողականության համակարգում ներկայացված գնումների գումարային առումով 19 տոկոսը (180.2 մլրդ), իսկ քանակային առումով շուրջ 6 տոկոսը (13103 պայմանագիր):

ՊՆ գնումներում հաղթող են ճանաչվել 359 ընկերություններ: Պետք է նշել, որ խոշորագույն 10 մատակարարները վերահսկում են ՊՆ գնումների գումարային առումով 48 (իսկ առանց բնական մենաշնորհների՝ 40 տոկոս), իսկ քանակային առումով շուրջ 5 տոկոսը (Տես Աղյուսակ 6):

Աղյուսակ 8. ՊՆ գնումների հաղթած 10 խոշոր մատակարարներ, 2017

Հաղթած մասնակիցը	Գներացրած պարտավորությունը, մլն դրամ	Մասնաբաժինը, %	Հաղթած պայմանագրերը, հատ	Մասնաբաժինը, %
Ֆլեշ ՍՊԸ	5390	15.8	3	0.4
«ՀԷՑ» ՓԲԸ	2134	6.3	1	0.1
Էլիտ Կապիտալ ՍՊԸ	1589	4.7	4	0.5
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	1118	3.3	1	0.1
Ավանգարդ ՍՊԸ	1041	3.0	10	1.3
Մոսէսթրո ՍՊԸ	960	2.8	5	0.7
Արպանիվ ՍՊԸ	854	2.5	5	0.7
Արցախի Կարի Կոշիկի Արտադրական Միավորում ՓԲԸ	848	2.5	2	0.3
Աքվատիկ ՍՊԸ	825	2.4	2	0.3
Էրիզ ՍՊԸ	759	2.2	5	0.7
Վանգաս ՍՊԸ	694	2.0	8	1.0
«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ	674	2.0	2	0.3
<b>Ընդամենը 10 խոշորագույն (ներառյալ բնական մենաշնորհներ)</b>	<b>15518</b>	<b>46</b>	<b>38</b>	<b>5</b>
<b>Ընդամենը 10 խոշորագույն առանց բնական մենաշնորհների</b>	<b>13634</b>	<b>40</b>	<b>46</b>	<b>6</b>

Բերված տվյալները թույլ են տալիս ենթադրել, որ ՊՆ գնումները ունեն կենտրոնացված բնույթ:

Մեր կողմից ուսումնասիրվել և վերհանվել են ՊՆ գնումներում հաճախակի հաղթողները:

Աղյուսակ 9. ՊՆ գնումներում հաճախակի հաղթած մասնակիցները, 2017

Հաղթած մասնակիցը	Հաղթած պայմանագրերը, հատ	Մասնաբաժինը, %	Գներացրած պարտավորությունը, մլն դրամ	Մասնաբաժինը, %
Երվիտա ՄՊԸ	14	1.8	510	1.5
ՄԱԺԷՎ ՄՊԸ	14	1.8	143	0.4
Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ	13	1.7	344	1.0
Էյչ Գրուպ ՄՊԸ	13	1.7	86	0.3
Ինտերմեդ Գրուպ ՄՊԸ	12	1.6	359	1.1
Ավանգարդ ՄՊԸ	10	1.3	1041	3.0
«Պահապան» ՄՊԸ	9	1.2	366	1.1
Կոմայրուտեր Սերվիս ՄՊԸ	9	1.2	39	0.1
Վանգաս ՄՊԸ	8	1.0	694	2.0
Ռեդի-Սթեդի ՄՊԸ	8	1.0	106	1.0
<b>Ընդամենը 10 հաճախակի հաղթողներ</b>	<b>110</b>	<b>14</b>	<b>3688</b>	<b>11</b>

Հաջորդիվ մեր կողմից վերլուծվել է, թե որքանով են ՊՆ գնումներում խոշոր հաղթողները դիվերսիֆիկացված պորտֆելի առումով:

Աղյուսակ 10. Խոշորագույն մատակարարների պորտֆելում ՊՆ-ի դերակատարումը, 2017

Հաղթած մասնակիցը	Գնումների համակարգում գեներացրած պայմ. ծավալը, մլն դրամ	ՊՆ նկատմամբ գեներացրած պայմ. ծավալը, մլն դրամ	Պորտֆելում ՊՆ-գնումների մասնաբաժինը, %
Ֆլեշ ՍՊԸ	7589	5390	71
Էլիտ Կապիտալ ՍՊԸ	1589	1589	100
Ավանգարդ ՍՊԸ	1055	1041	99
Մոսէսթո ՍՊԸ	995	960	96
Արպանիվ ՍՊԸ	954	854	89
Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում ՓԲԸ	848	848	100
Աքվատիկ ՍՊԸ	825	825	100
Էրիզ ՍՊԸ	763	759	99
Վանգաս ՍՊԸ	694	694	100
«Ռադիան Տեխնոլոգիա» ՍՊԸ	674	674	100

Ինչպես նկատում ենք խոշորագույն հաղթողների պորտֆելում ՊՆ ունի վճռորոշ դերակատարում, այսինքն՝ նրանց կենսունակությունը մեծապես կախված է ՊՆ պատվերներից:

## 2018թ I կիսամյակում ՊՆ կողմից կատարված գնումների մոնիտորինգի արդյունքները

2018թ I կիսամյակում ըստ բաց տվյալների (օգտագործվել են ARMEPS<sup>1</sup> համակարգի տվյալները) ՊՆ իրականացրել է 539 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է 25.2 մլրդ դրամի պարտավորություն: Պետք է նշել, որ ՊՆ գնումները կազմում են նշված ժամանակահատվածում համակարգում ներկայացված գնումների գումարային առումով 19 տոկոսը (136.9 մլրդ), իսկ քանակային առումով շուրջ 6 տոկոսը (8634 պայմանագիր):

<sup>1</sup> <https://armeps.am/ppcm/public/reports>

ՊՆ գնումներում հաղթող են ճանաչվել 289 ընկերություններ:

Պետք է նշել, որ խոշորագույն 10 մատակարարները վերահսկում են ՊՆ գնումների գումարային առումով 58 (իսկ առանց բնական մենաշնորհների՝ 48 տոկոս), իսկ քանակային առումով շուրջ 5 տոկոսը (Տես Աղյուսակ 11):

Աղյուսակ 11. ՊՆ գնումների հաղթած խոշոր մատակարարներ, 2018

Հաղթած մասնակիցը	Գեներացրած պարտավորությունը, մլն դրամ	Մասնաբաժինը, %	Հաղթած պայմանագրերը, հատ	Մասնաբաժինը, %
Ֆլեշ ՍՊԸ	5094	20.2	2	0.4
ՀԷՑ ՓԲԸ	2117	8.4	1	0.2
Գազպրոմ Արմենիա ՓԲԸ	1359	5.4	1	0.2
Էլիտ Կապիտալ ՍՊԸ	1198	4.7	2	0.4
Էրիզ ՍՊԸ	1100	4.4	5	0.9
Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում ՓԲԸ	926	3.7	3	0.6
Ավանգարդ ՍՊԸ	861	3.4	8	1.5
Արպանիլ ՍՊԸ	705	2.8	1	0.2
«Ռատվան Տեխնոլոգիա» ՍՊԸ	662	2.6	2	0.4
Աքվատիկ ՍՊԸ	649	2.6	1	0.2
Արամ-Գ ՍՊԸ	546	2.2	1	0.2
Հանս Ֆուդ ՍՊԸ	473	1.9	2	0.4
<b>Ընդամենը 10 խոշորագույն (ներառյալ բնական մենաշնորհներ)</b>	<b>14670</b>	<b>58.2</b>	<b>26</b>	<b>4.8</b>
<b>Ընդամենը 10 խոշորագույն առանց բնական մենաշնորհների</b>	<b>12214</b>	<b>48.4</b>	<b>27</b>	<b>5</b>

Ինչպես նկատում ենք խոշորագույն հաղթողները վերահսկում են ընդհանուր մրցույթների շուրջ 50 տոկոսը, որը որոշակիորեն խոսում է բարձր կենտրոնացվածության մասին:

Աղյուսակ 12-ում ներկայացված են առավել հաճախ հաղթած մասնակիցները:

Աղյուսակ 12. ՊՆ գնումների հաճախակի հաղթած մասնակիցները, 2018

Հաղթած մասնակիցը	Հաղթած պայմանագրերը, հատ	Մասնաբաժինը ՊՆ-ի ընթացակարգերում %	Գներացրած պարտավորությունը ՊՆ-ում, մլն դրամ	Մասնաբաժինը, ՊՆ-ի գնումներում %
Ավանգարդ ՍՊԸ	8	1.5	861	3.4
Պահասպան ՍՊԸ	8	1.5	328	1.3
Հերմիտե Ճարմեց ՍՊԸ	8	1.5	75	0.3
Մասիսի Գարուն կարի ֆարրիկա ՍՊԸ	7	1.3	268	1.1
Վարբադ ՍՊԸ	7	1.3	99	0.4
Արֆարմացիա ՓԲԸ	7	1.3	20	0.1
Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ	6	1.1	184	0.7
Նատալի Ճարմ ՍՊԸ	6	1.1	80	0.3
Երվադա ՍՊԸ	6	1.1	48	0.2
Լեյկոալեքս ՍՊԸ	6	1.1	20	0.1
<b>Ընդամենը 10 հաճախակի հաղթողներ</b>	<b>69</b>	<b>12.8</b>	<b>1984</b>	<b>7.9</b>

Հաջորդիվ մեր կողմից վերլուծվել է, թե որքանով են ՊՆ գնումներում խոշոր հաղթողները դիվերսիֆիկացված պորտֆելի առումով:



Աղյուսակ 13. Խոշորագույն մատակարարների պորտֆելում ՊՆ-ի դերակատարումը, 2018

Հաղթած մասնակիցը	Գնումների համակարգում գեներացրած պայմ. ծավալը, մլն դրամ	ՊՆ նկատմամբ գեներացրած պայմ. ծավալը, մլն դրամ	Պորտֆելում ՊՆ-գնումների մասնաբաժինը, %
Ֆլեշ ՍՊԸ	6452	5094	79
Էլիոտ Կապիտալ ՍՊԸ	1198	1198	100
Էրիզ ՍՊԸ	1100	1100	100
Ավանգարդ ՍՊԸ <sup>2</sup>	967	952	98
Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում ՓԲԸ	926	926	100
Արպանիվ ՍՊԸ	790	705	89
«Ռատվան Տեխնոլոգիա» ՍՊԸ	662	662	100
Աքվատիկ ՍՊԸ	649	649	100
Արամ-Գ ՍՊԸ	546	546	100
Հանս Ֆուդ ՍՊԸ	473	473	100

Հաջորդիվ վերլուծել ենք խոշոր հաղթողների կողմից ԶԱՀ-ին կատարած վճարումները, որոնք ներկայացված են Աղյուսակ 14-ում, իսկ դրանց հիմքերը Հավելված 2-ում:

<sup>2</sup> Հուլիսի 26-ի մեր ուսումնասիրությունից հետո որոշ պայմանագրեր են ավելացվել:

Աղյուսակ 14. Խոշոր հատվածների ՉԱՀ-ին կատարված վճարումները

Հաղթած մասնակիցը	ՊՆ նկատմամբ գեներացրած պայմ. ծավալը, մլն դրամ	ՉԱՀ-ի տվյալների հիման վրա ենթադրյալ աշխատողների թիվը	Մոց. ցանցերում ներկայացվածությունը	Ռ-իսկայնությունը
Ֆլեշ ՍՊԸ	5094	354		
Էլիտ Կապիտալ ՍՊԸ	1198	9-29	Կայք էլ չունի	Բարձր
Էրիզ ՍՊԸ	1100	Տվյալներ չկան	Կայք էլ չունի	Բարձր
Ավանգարդ ՍՊԸ <sup>3</sup>	952	45-41	Կայք էլ չունի	Բարձր
Արցախի Կարի Կոշիկի Արտադրական Միավորում ՓԲԸ	926	36-220	Կայք ունի	Միջին
Արպանիվ ՍՊԸ	705	82	Կայք էլ չունի	Միջին
«Ռատվան Տեխնոլոգիա» ՍՊԸ	662	Տվյալներ չկան	Կայք էլ չունի	Բարձր
Աքվատիկ ՍՊԸ	649	8-25	Կայք էլ չունի	Միջինից բարձր
Արամ-Գ ՍՊԸ	546	1	Կայք էլ չունի	Բարձր
Հանս Ֆուդ ՍՊԸ	473	2017թ. սեպտեմբերից հետո վճարումներ չի հրականացրել	Կայք էլ չունի	Բարձր

<sup>3</sup> Չուլիսի 26-ի մեր ուսումնասիրությունից հետո որոշ պայմանագրեր են ավելացվել, կնքված նոր համաձայնագրերի հիման վրա: Այստեղ ներկայացված են հուլիսի 28-ի դրությամբ տեղեկությունները:

Մեր կողմից փորձ է կատարվել ներկայացնել նաև այն ընկերությունները որոնց մասին ՉԱՀ-ում նկատել ենք խնդիրներ (բացակայում են գրանցված աշխատողների մասին տեղեկություններ և այլն), որոնք ամփոփված են հավելված 2-ում:

## Կոռուպցիոն ռիսկեր պարունակող այլ գնումներ

Բացմիցս նշել ենք, որ գնային տեղակատվության մասով թափանցիկության բարձրացումը պետգնումներում կոռուպցիոն ռիսկերը տեղափոխել է քանակային դաշտ: Մեր կողմից կատարված աշխատանքը թույլ է տալիս նվազեցնել ուսումնասիրությունների շրջանակը կենտրոնանալով տարբեր հայտանիշների հիման վրա վերհանված ներքոհիշյալ ընկերությունների ուսումնասիրության վրա:

*Աղյուսակ 15. ՉԱՀ-ի տվյալների ուսումնասիրության արդյունքում ռիսկայնություն*

### ներկայացնող ֆիրմաների ցանկ

Հաղթած մասնակիցը	ՊՆ նկատմամբ գեներացրած պայմ. ծավալը, մլն դրամ	ՉԱՀ-ի տվյալների հիման վրա ենթադրյալ աշխատողների թիվը	Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ըստ գնման առարկայի
<i>Էյչ Գրուպ ՍՊԸ</i>	75	2017թ սեպտեմբերից աշխատող չի հայտարարագրել	1. Մետաղյա արկղեր 2. ցուցապաստառ, գրատախտակ 3. համակարգչային սարքեր, սարքավորումներ եվ օժանդակ միջոցներ 4. Շինանյութ
<i>Արտաշես Բաղդասարյան Տիգրանի Ա/Չ</i>	47.3	Մեկ աշխատող մեծ ծավալի նորոգումներ	
<i>Մոնաստինա ՍՊԸ</i>	4.8	Տվյալներ չկա	
<i>ԳԵՎԳՐՈՒՊ ՍՊԸ</i>	73.7	Տվյալներ չկա	
<i>ՄԱԺԷՎ ՍՊԸ</i>	37.6	Մեկ աշխատող մեծ ծավալի նորոգումներ	1. Բժշկական պարագաներ 2. Գրադարանների ավտոմատացման սարքեր

			3. կապի և համակարգչային միջոցներ 4. չափիչ սարքեր
Գրակ ՍՊԸ	25.9	2017թ հոկտեմբերից աշխատող չի հայտարարագրել	
ԱԶ Արման Ասմանգույան	4.9	2017թ նոյեմբերից աշխատող չի հայտարարագրել	
Ֆ/ա Բշխան Միրզոյան	9.4	Տվյալներ չկա	
Պահասյան ՍՊԸ	328.2	Տվյալներ չկա	
Արկածախնդիր ՍՊԸ	8.0	2018թ հունվարից աշխատող չի հայտարարագրել չնայած պայմանագրով լուսանկարչական ծառայություններ պետք է մատուցվեն մայիսին	
Անդրանիկ Գասպարյան ԱԶ	5	2018թ հունվարից աշխատող չի հայտարարագրել չնայած պայմանագիրը կնքվել է ապրիլին	
ԱԶ Հրայր Մանուկյան	78.6	Տվյալներ չկա	
Ալտրո Մեդիա ՍՊԸ	4.2	Տվյալներ չկա	
Ֆարմեգուս ՍՊԸ	2.6	Տվյալներ չկա	
ԱԶ Գևորգ Հովհաննիսյան	4.4	2018թ հունվարից աշխատող չի հայտարարագրել չնայած պայմանագրեր է կնքել նույնիսկ հունիսին	
ԱԶ Հակոբ Դոնգեյան Հրաչյայի	2.9	Տվյալներ չկա	
ԴԱՌԵՍ ՍՊԸ	25	1-3 աշխատող	ունիվերսալ գործունեություն
Կապիտալ Ինվեստ ՍՊԸ	259	1 աշխատող	
Արաստ ՍՊԸ	47.8	2017թ օգոստոսից աշխատող չի հայտարարագրել	

<b>Հակոբ Առաքելյան Ա/Չ</b>	92.7	2018թ հունվարից աշխատող չի հայտարարագրել	
Վարդադ ՄՊԸ	99	Մինչև 2018թ ապրիլ մեկ աշխատող է հայտարարագրել, բայց ահագին մեծ ծավալների աշխատանք է իրականացվում	
Էդասնորա ՄՊԸ	37.8	2017թ սեպտեմբերից աշխատող չի հայտարարագրել	
Վարդադ Ճարմ ՄՊԸ	11.4	2017թ հունիսից աշխատող չի հայտարարագրել	
Ա/Չ Յոյակ Գեվորգյան Վարդգեսի	12.0	Տվյալներ չկա	ունիվերսալ գործունեություն
Սոֆի Գրուսյ ՄՊԸ	11.0	2018թ հունվարից աշխատող չի հայտարարագրել բայց հաղթել ու մատակարարել է մայիսին	
<b>Մաստերֆուդ ՄՊԸ</b>	82.7	Տվյալներ չկա	ունիվերսալ գործունեություն
Էրոդյալ ՄՊԸ	21.9	2017թ հուլիսից աշխատող չի հայտարարագրել	
Ռաֆ-Օջախ ՄՊԸ	66.2	2017թ նոյեմբերից աշխատող չի հայտարարագրել	
Ա/Չ Գրիգոր Այվազյան	6.4	2017թ սեպտեմբերից աշխատող չի հայտարարագրել	
Ստանդարտ 2014 ՄՊԸ	22.1	Տվյալներ չկա	
Ա/Չ Մեծյուն Գրիգորյան	39.1	2017թ նոյեմբերից աշխատող չի հայտարարագրել	
Կոմսասս ՄՊԸ	9.5	Տվյալներ չկա	
Կոմսյանսկետ ՄՊԸ	82.5	2017թ հոկտեմբերից աշխատող չի հայտարարագրել	

Մասիսի Գարուն կարի ֆարքիկա ՄՊԸ	267.7	2018թ հունվարից աշխատող չի հայտարարագրել	
ԱԶ Հենրիկ Պետրոսյան	0.7	Տվյալներ չկա	
Էդկոնյ ՄՊԸ	5.6	2018թ հունվարից աշխատող չի հայտարարագրել	
Երևան ԶՕԸ	0.5	2017թ սեպտեմբերից աշխատող չի հայտարարագրել	
Աստղիկ Գրատուն ՄՊԸ	18	2017թ մարտից աշխատող չի հայտարարագրել	
Հովսեփ Դավթյան ԱԶ	3	Տվյալներ չկա	
Սատուրն Գրին ՄՊԸ	5.2	2017թ հունիսից աշխատող չի հայտարարագրել	
Գառու Գրույ ՄՊԸ	85.3	2017թ նոյեմբերից աշխատող չի հայտարարագրել	
Արեյան ԴԶ ԲԲԸ	40	Տվյալներ չկա	
Ազարակ ԲԲԸ	60	2017թ նոյեմբերից աշխատող չի հայտարարագրել	
ԱԶ Արզար Ավետիսյան	118.8	Տվյալներ չկա	Այլ
Արմեն գրույ ՄՊԸ	5.0	2017թ հունիսից աշխատող չի հայտարարագրել	Ունիվերսալ
ԶԻ ՎԻ ԷՆ ՄՊԸ	30.5	2018թ մարտից աշխատող չի հայտարարագրել, մատակարարումը հունիսին է եղել	
ՆՈՐ ՖՈՒԴ ՄՊԸ	6.1	2017թ նոյեմբերից աշխատող չի հայտարարագրել	
Էդել ՄՊԸ	44.3	2017թ դեկտեմբերից աշխատող չի հայտարարագրել	
Արեգ Արշակյան ՄՊԸ	12.4	Տվյալներ չկա	
Լիվասա ՄՊԸ	36.9	2017թ փետրվարից աշխատող չի հայտարարագրել	

<i>Բարսեղյան եղբայրներ ՄՂԸ</i>	9.9	Տվյալներ չկա	
<i>Ա/Չ Վյաչեսլավ Ամիրջանյան</i>	3.4	Տվյալներ չկա	
<i>Ա/Չ Տիրուհի Գեվորգյան</i>	2.0	2017թ նոյեմբերից աշխատող չի հայտարարագրել	
<i>Դյուրյանզ ՄՂԸ</i>	2.0	2017թ նոյեմբերից աշխատող չի հայտարարագրել	
<i>Ա/Չ Արամ Չարգարյան</i>	12.5	Տվյալներ չկա	
<i>Ա/Չ Իրինա Մելքոնյան</i>	2.8	2017թ դեկտեմբերից աշխատող չի հայտարարագրել	

*Հիմքերը ներկայացված են Հավելված 3-ում*

**Աղյուսակ 16. Այլ կարմիր դրոշների համակցության արդյունքում ռիսկային համարված ընկերությունների ցանկ**

Հաղթած մասնակիցը	ՊՆ նկատմամբ գեներացրած պայմ. ծավալը, մլն դրամ	Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ըստ գնման առարկայի
«Էյչ Այ Ուայ» ՍՊԸ	46.5	Ներկայացուցչական ծախսեր ոչ մրցակցային գնումներ
Լարս ՍՊԸ	40	
Չինառ ՓԲԸ	20	ՊՆ-ի ֆիրմաներն են ըստ նախորդ գեկույցի
Ինտերնետ Գրուպ ՍՊԸ	184	
Գրին լայթ ՍՊԸ	122	
Ռեյփսիդ ՍՊԸ	91.4	560-ից ձեռք հեղափոխությունից հետո դարձավ 530
Հենակետ ՓԲԸ	5.4	ՊՆ-ի ֆիրմաներն են ըստ նախորդ գեկույցի
«ԻՍՍ ԼՈԳԻՍՏԻԿԱ» ՍՊԸ	19.5	Մեկ անձ, ներկայացուցչական+աշխատողների մասով էլ խնդիր կա
Մակրո Ֆուդ		
Վանգաս ՍՊԸ	120.8	Ունիվերսալ+գործունեությունը դադարեցված+մարտից հետո աշխատող չի գրանցել
Ինտերգետուեկ ՍՊԸ	32.7	1 աշխատող, այլ
Յուտեկ	160.3	Նորարաց, 1 աշխատողով մարտից հետո ընդհանրապես աշխատող չունենալով ունիվերսալ գործունեություն
Տեխնոֆրիզ ՍՊԸ	41	1 աշխատող, այլ
Միքս Գրուպ ՍՊԸ	33	
Ալեյի ՍՊԸ	52	
Ֆորտունա Սիսյսիզ ՍՊԸ	189.3	Աշխատող, այլ
Արապլաստ	70	Այլ, տանիքների վերանորոգում նույն գումարով ամեն տարի
Աննա Դիանա ՍՊԸ	18.6	Այլ+աշխատող
Հրանտ	66	Այլ
Կարապետյան ՍՊԸ		
Եթերակ ՍՊԸ	4.8	Սահմանափակումներ կան
Մեծ մասրենի ՍՊԸ	14	
Գևորգյան և Ներսիսյան ՍՊԸ	30	



Ի լրումն ուսումնասիրել ենք հիմնադիրներին, որի արդյունքում արձանագրել ենք ռիսկեր, մասնավորապես հաղթող են ճանաչվել գործունեությունը դադարեցված ընկերություններ կամ ընկերություն որոնց նկատմամբ առկա են սահմանափակումներ (Հավելված 3):

## Բողոքարկման համակարգի կողմից կայացած որոշումների մոնիտորինգ

Մեր կողմից իրականացվել է բողոքների մոնիտորինգ, որի արդյունքները, ՊՆ համատեքստում ագրեգացված տեսքով ներկայացնում ենք ստորև.

2018թ I կիսամյակի ընթացքում քննվել ու որոշում է կայացվել 271 հայտարարության գծով, որից 127-ը կամ (47 տոկոսը) վերաբերվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (սև ցուցակ) ներառելու հարցերին:

**ՊՆ մասնակցությամբ քննվել է սև ցուցակում ներառելու 47 հայտարարություն, որոնց քննության ընթացքում ընդունված որոշումների արդյունքում բավարարվել է բավարարվել է 20 բողոք, մերժվել 27-ը: Այսինքն սև ցուցակում ներառելու բողոքների մասով բավարարվել դրա 42 տոկոսը:**

Սև ցուցակի հետ չկապված ստացվել է 144 հայտարարություն, որից 27-ը (19%) թողնվել է առանց քննության: 117 քննված հայտարարությունների արդյունքում ընդունվել է 63 բավարարման որոշում (54%):

Ընդ որում, ՊՆ-ն հանդիսանում է այն մարմինը ում գործողությունների/անգործության դեմ ամենից հաճախ են բողոքել: ՊՆ-ի գործողությունների դեմ ստացվել է 38 բողոք, կամ ընդհանուրի (32%), **այսինքն գրեթե յուրաքանչյուր երրորդ բողոքը ՊՆ-ի դեմ է:** Պետք է նշել, որ 38 բողոքների քննության արդյունքում կայացվել է 38 որոշում, որոնցով բավարարվել է 20 բողոք (53%), մերժվել՝ 18-ը:

## Առաջարկություններ և եզրակացություններ

- Որոշակի խումբ ագրեգացված տեղեկություններ տրամադրել գաղտնի գնումների մասին, օրինակ ձեռք է բերվել ...մին դրամի, որից այսքանը ուղղակի վաճառքի եղանակով: Ընդհանրապես միջազգային պակտիկայում փորձում են գնել արդի տեխնիկա, որը կբարձրացնի որակական բաղադրիչը, որպեսզի կանխեն հնարավոր ռիսկերը, պարտադիր պայման է, որ այդ երկիրը օգտագործի այն զենքը, որը վաճառում է այլ երկրի:
- Գնումների մոնիտորինգը ցույց է տալիս, որ շարունակում է ունիվերսալ ֆիրմաների պրակտիկան:<sup>4</sup> Այնուհանդերձ եթե նախկինում նրանք 10-ից ավելի գնման ուղղություններ էին հաղթում, ներկայում դրանց թիվը կրճատվել է և ամեն մեկը կարծես թե գտել է իր նիշան:
- Առանձնացվել են ռիսկային ֆիրմաներ: Ընդհանրապես ՊԵԿ-ը, ՊՆ-ի ներքին աուդիտը ՉԱՀ-ին կատարված վճարումները պետք է ներառել ռիսկային ֆիրմաների ընտրության մեթոդաբանության հիմքում:
- Ներդնել հանրային ակտիվների վերահսկողության մեխանիզմներ, որը ապրանքների մասով, օրինակ հանձնաժողովում ընդգրկված պատգամավորների համար կհանդիսանա մոնիտորինգի հիմք: Իհարկե, սա գլոբալ ռազմավարության մի մաս պետք է լինի:

<sup>4</sup> 2018 թվականին

«Ավանգարդ» ՍՊԸ-ն մատակարարել է ՊՆ-ին հետևյալ ապրանքները՝ կոշիկի ներդիրներ, լվացքի պայուսակներ, էլեկտրական տարատեսակ սարքավորումներ, կաթնամթերք և հանդերձանքի պարագաներ, ներառյալ՝ ենթաօծիքներ, գոտիներ, հոսպիտալական խալաթներ և այլն:

«Էյչ Այ Ուայ» ՍՊԸ կատարել է 46,5 միլիոն դրամի ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ

Երվադա ՍՊԸ՝ բազկաթոռ, մեդալներ, կրծքանշաններ, դափնետերև, շինանյութ, զորանոցագրասենյակային գույք:

Էյչ Գրուպ ՍՊԸ՝ համակարգչային սարքեր, սարքավորումներ եվ օժանդակ միջոցներ, Շինանյութ՝ ցեմենտ, կիր, փոշի

Մաստերֆուդ ՍՊԸ՝ լվացքի հավաքման ծառայություն, սննդամթերք՝ Լեչո

- Պայմանագրերը կնքվում են խոշորացված, որոնք որոշակիորեն ազդում են որակի վրա, իսկ արդյունքներից չեն օգտվում գյուղացիական տնտեսությունները:
- Գնումների վիճակագրության որակը հեռու է բավարար լինելուց: Նույն ֆիրման մի քանի անվանում է մուտքագրվում, առկա են դատարկ տեղեկություններ, պլանավորման դեպքում բացասական թվեր և այլն: Նկատվել են դեպքեր երբ գնումների հաշվետվողական կայքի տվյալների բազայում առկա են տեստեր, ինչպես նաև ներկայացված տեղեկությունների նույն ժամանակաշրջանի համար հետագայում փոփոխություններ են կրում (օրինակ մոնիտորինգի ավարտից հետո հուլիսի 1-ի դրությամբ ՊՆ պայմանագրերի թիվը որոշակիորեն ավելացվեց) :
- Ճարտունակվում են Չինառ ՓԲԸ-ից և Հենակետ ՓԲԸ-ից գնումները, ինչի մասին խոսել էինք նախկին զեկույցում:
- Ընդ որում, ՊՆ-ն հանդիսանում է այն մարմինը ում գործողությունների/անգործության դեմ ամենից հաճախ են բողոքել: ՊՆ-ի գործողությունների դեմ ստացվել է 38 բողոք, կամ ընդհանուրի (32%), այսինքն գրեթե յուրաքանչյուր երրորդ բողոքը ՊՆ-ի դեմ է: Պետք է նշել, որ 38 բողոքների քննության արդյունքում կայացվել է 38 որոշում, որոնցով բավարարվել է 20 բողոք (53%), մերժվել՝ 18-ը:
- Իշխանափոխությունից հետո որոշ պայմանագրերում գնային փոփոխություններ են կրել, այսինքն իշխանափոխությունից հետո միջազգային շուկայում տեղի ունեցած գնային փոփոխությունները «նկատվել են», որի արդյունքում մատակարարները որոշակիորեն նվազեցրել են իրենց շահույթը: Օրինակ շաքարավազը Ալեքս Հոլդինգի կողմից 320-ից նվազեցվել է 285 դրամ մեկ կգ համար: Ձեթը՝ Ռափսիդ ընկերության կողմից և այլն:
- Դեղորայքի մասով գնումները բավական մրցակցային են:
- Հացաթխման առումով առկա են գների էական տատանումներ (98-ից 128 դրամ):

### Հավելված 1. ՊՆ գնումների պլանավորում

2013 թ

ՀՀ պաշտպանության նախարարություն				46,150,214.0
Բաժին N 02	Խումբ N 01	Դաս N 01	Ուղղակի պաշտպանություն	42,662,405.5
1. Ուղղակի կարիքների բավարարում				42,662,405.5
ՄԱՍ Ի. Ա Պ Բ Ա Ն Ք Ն Ե Բ				35,612,191.2
Միս տավարի ոսկորոտ (I տեսակի)	ՇՀ	Կգ	6,365.0	14,957.8
Միս՝ տավարի ոսկորով	ՇՀ	Կգ	218,400.0	436,800.0
Միս խոզի ոսկորոտ /1-ին կարգի/	ՇՀ	Կգ	498,400.0	687,792.0
Միս հավի	ՇՀ	Կգ	134,410.0	161,292.0

2014

ՀՀ պաշտպանության նախարարություն				47,723,348.5		
Բաժին N 02	Խումբ N 01	Դաս N 01	Ուղղակի պաշտպանություն	45,093,347.9		
1. Ուղղակի կարիքների բավարարում				45,093,347.9		
ՄԱՍ Ի. Ա Պ Բ Ա Ն Ք Ն Ե Բ				36,231,835.6		
03121200-1	քաղած ծաղիկներ	ՇՀ	հատ	150.0	3,000.0	450.0
03121200-2	քաղած ծաղիկներ	ՇՀ	հատ	150.0	11,120.0	1,668.0
03121210-1	ծաղկային կոմպոզիցիաներ	ՇՀ	հատ	9,000.0	20.0	180.0
03121210-2	ծաղկային կոմպոզիցիաներ	ՇՀ	հատ	60,000.0	30.0	1,800.0
03121210-3	ծաղկային կոմպոզիցիաներ	ՇՀ	հատ	32,000.0	24.0	768.0
03121210-4	ծաղկային կոմպոզիցիաներ	ՇՀ	հատ	60,000.0	26.0	1,560.0
03121210-5	ծաղկային կոմպոզիցիաներ	ՇՀ	հատ	7,000.0	272.0	1,904.0
03142510-1	ծու. 01 կառո	ՇՀ	հատ	64.0	7,314,732.0	468,142.8

2015

<< պաշտպանության նախարարություն				44,640,127.5
Բաժին N 02	Խումբ N 01	Ղաս N 01	Ուղղման պաշտպանություն	42,855,256.9
1. Ուղղման կարիքների բավարարում				42,855,256.9

2016

<< պաշտպանության նախարարություն				44,416,146.1		
Բաժին N 02	Խումբ N 01	Ղաս N 01	Ուղղման պաշտպանություն	42,617,623.7		
1. Ուղղման կարիքների բավարարում				42,617,623.7		
ՄԱՍ Ի. Ա Պ Ր Ա Ն Ք Ն Ե Ր				33,908,624.0		
03111180-1	ծաղիկների սերմեր	ՇՀ	հատ	8,700.0	20.0	174.0
03111270-1	քաթան	ՇՀ	հատ	150,000.0	10.0	1,500.0

## 2017թ-42.9 մլրդ դրամ

<< պաշտպանության նախարարություն				42,979,039.9		
Բաժին N 02	Խումբ N 01	Ղաս N 01	Ուղղման պաշտպանություն	41,288,628.3		
